COVID-19

Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Առողջապահության Վարչություն

FEMA COVID-19-ի Թաղման Աջակցության Ծրագիր

2021թ. Ամերիկյան Փրկության Ծրագրի մասին Օրենքի ընդունումը հնարավոր է դարձնում ընտանիքների և անհատների համար, ովքեր 2021 թվականին COVID-19-ի հետևանքով կրում են թաղման ծախսեր և այդ ծախսերը վեր են իրենց հնարավորություններից, դիմել թաղման ծախսերի աջակցության համար:

Իրավասություն՝

Ով Կարող Է Դիմել	Ով Չի Կարող Դիմել
• Անձը պետք է մահացած լինի Միացյալ Նահանգներում, ներառյալ՝ Միացյալ Նահանգների տարածքները և Կոլումբիայի շրջանը: • Մահվան վկայականի մեջ պետք է նշված լինի, որ անձի մահն ուղղակիորեն կամ անուղղակի կերպով կապված է եղել COVID-19-ի հետ: • Դիմողը պետք է լինի Միացյալ Նահանգների քաղաքացի, քաղաքացու կարգավիճակով քաղաքացիություն չունեցող անձ (non-citizen national) կամ որակավորված օտարերկրացի, ովքեր թաղման ծախսեր են կրել 2020թ. Հունվարի 20-ից հետո: • Չի պահանջվում, որպեսզի մահացած անձը լինի Միացյալ Նահանգների քաղաքացի, քաղաքացու կարգավիճակով քաղաքացիություն չունեցող անձ (non-citizen national) կամ որակավորված օտարերկրացի:	• Անչափահաս երեխան չի կարող դիմել չափահաս անձի անունից, որը չի հանդիսանում Միացյալ Նահանգների քաղաքացի, քաղաքացու կարգավիճակով քաղաքացիություն չունեցող անձ (non-citizen national) կամ որակավորված օտարերկրացի: • ԱՄՆ-ում օրինական կարգավիճակով գտնվում են մի քանի կատեգորիաների օտարերկրացիներ, որոնք իրավասու չեն օգտվելու FEMA-ի Անհատական և Ընտանեկան Ծրագրի աջակցությունից, ներառյալ՝ թաղման օգնությունը: Դրանք ներառում են, բայց չեն սահմանափակվում՝ ○ Ժամանակավոր զբոսաշրջային նպատակով վիզա ունեցողները ○ Օտարերկրյա ուսանողները ○ Ժամանակավոր աշխատանքային վիզա ունեցողները ○ Մշտական բնակիչները, ինչպիսիք են՝ Միկրոնեզիայի Դաշնային Նահանգների, Պալաուի և Մարշալյան կղզիների Հանրապետության բնակիչները:

Ինչպես դիմել՝

- Դիմումների ընդունումը սկսվում է 2021 թվականի Ապրիլի 12-ին: Դիմումատուները պետք է դիմեն հեռախոսազանգի միջոցով՝ զանգահարելով COVID-19 Թաղման Աջակցության Գծի Հեռախոսահամարին՝ 844-684-6333 | Հեռատիպ (TTY)՝ 800-462-7585: Առցանց դիմումներ չեն ընդունվում:
- Աշխատանքային ժամերը՝ Երկուշաբթի – Ուրբաթ, առավոտյան 9-ից երեկոյան 9-ը՝ Արևելյան ժամանակով:
- Թաղման տները իրավասու չեն դիմելու ընտանիքի անունից. դիմող անձը պետք է լինի անհատ, ոչ բիզնես-ձեռնարկություն, որը կրել է թաղման ծախսերը:

- Անձինք, ովքեր վերջերս դիմել են FEMA-ի աջակցությանը աղետի հետևանքով տան և/կամ անձնական անշարժ գույքի վնասի աջակցության համար, ինչպես նաև 2020թ. Հունվարի 20-ից հետո կրել են թաղման ծախսեր՝ կապված COVID-19-ի հետ, կարող են դիմել COVID-19-ի Թաղման Աջակցության համար: Անհրաժեշտ է ներկայացնել առանձին դիմում:

Ֆինանսական Աջակցություն՝

- Դիմումատուները կարող են ստանալ աջակցություն կամ թաղման ծախսերի փոխհատուցում մի քանի մահացած անձանց համար:
- Աջակցությունը սահմանափակվում է մեկ թաղման համար 9,000 ԱՄՆ դոլարով և առավելագույնը 35,000 դոլարով ըստ նահանգի, տարածաշրջանի կամ Կոլումբիայի Շրջանի մեկ դիմումի:
- FEMA-ն, առհասարակ, տրամադրում է COVID-19-ի Թաղման Օժանդակություն յուրաքանչյուր մահացած անձի կողմից միայն մեկ դիմումատուի: Մենք գիտակցում ենք, որ մի քանի անձինք կարող են իրենց ներդրումն ունենալ մեկ մահացած անձի թաղման ծախսերին: Այդպիսի իրավիճակներում FEMA-ն կաշխատի դիմումատուների և այն անձանց հետ, որոնք ներկայացնում են թաղման ծախսերի հետ կապված բազմաթիվ անդորրագրեր, եթե իրենց անունը չի նշվում անդորրագրում:

Թաղման Ծախսերը Փոխհատուցվում են՝

- COVID-19-ի Թաղման Աջակցությունը կաջակցի թաղման/հուղարկավորության կամ դիակիզման ծառայությունների ծախսերով
- Մինչև երկու անձանց ուղևորափոխադրումը՝ նույնականացնելու մահացած անձին
- Աճյունի տեղափոխում
- Դագաղ կամ աճյունի սափոր
- Թաղման տարածք կամ դիակիզման որմնախորշ (նիշա)
- Նշումով ցուցատախտակ կամ գերեզմանաքար
- Հոգևորականի կամ կրոնական սպասավորի ծառայություններ
- Թաղման արարողության կազմակերպում
- Թաղման սարքավորումների կիրառում և անձնակազմի ծառայությունների օգտագործում
- Դիակիզում և միջանկյալ ծախսեր
- Ծախսեր՝ կապված մահվան բազմաթիվ վկայագրերի արտադրման և հավաստագրման հետ
- Լրացուցիչ ծախսեր՝ պարտադրված են տեղային կամ նահանգային կառավարման ցանկացած կիրառելի օրենքներով կամ հրամանագրերով

Լրացուցիչ տեղեկությունների համար https://www.fema.gov/disaster/coronavirus/economic/funeral-assistance :